Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՆՈՒՇ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

10.12.2013թ-ին Մրգանուշ գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում, որը նախագահում էր համայնքի ղեկավար Մ.Սարգսյանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար Ա.Սահակյանը:

Մասնակցում էին ՀՀ Արարատի մարզպետարանի ներկայացուցիչ Հասմիկ Դանիելյանը, ավագանու անդամներ, գյուղապետարանի աշխատակազմը, նախակրթարանի, դպրոցի տնօրենն ու աշխատակիցները, համայնքի բնակիչները:

ԼՍԵՑԻՆ- Արարատի մարզի Մրգանուշ համայնքի ղեկավար Մ.Սարգսյանի հաշվետվությունը 2013 թվականին կատարած աշխատանքների վերաբերյալ:

ԱՐՁԱՆԱԳՐՎԵՑ, որ

2013թ-ի ընթացքում Մրգանուշ գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Գյուղապետարանը բնակիչներից ստացել է 56 դիմում, ինչպես նաև բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ:

Գյուղապետարանը բնակիչներին տվել է 443 տեղեկանք, ստացել 42 պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, որոնք քննարկվել են սահմանված ժամկետներում, տրվել պատասխաններ:

Տարվա ընթացքում կազմակերպվել են համայնքի վարչական տարածքում սանմաքրման աշխատանքներ, որոնք կրել են պարբերական բնույթ:

- Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել են հողամասերի չափագրման , սահմանների ճշգրտման, հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ:
- 2013թ-ի համայնքի բյուջեի սեփական եկամուտները 10.12.2013թ-ի դրությամբ ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝
  ա/ հողի հարկ 2907.85 հազ.դրամ
  բ/ գույքահարկ 610.4 հազ.դրամ
  գ/ տեղական տուրք 342.5 հազ.դրամ
  դ/ոչ հարկային եկամուտներ 139.0 հազ.դրամ
- Համայնքում իրականացվել են մի շարք սոցիալ-տնտեսական միջոցառումներ և ծրագրեր.
  ա/համայնքում նշվել է մայիսի 9-ը՝ Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի և Շուշիի ազատագրման օրը բ/համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 880,0 հազար դրամի ֆինանսական աջակցություն

գ/ աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է 700.0 հազար դրամ

դ/թաղման ծախս `250,0 հազար դրամ

ե/ նվիրատվություն հասարակական կազմակերպություններին՝ 100,0 հազ.դրամ

զ/Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի ներդրում՝ 250.0հազ.դրամ

է/ ՄԱԿ-ի համաշխարհային "Դպրոցական սնունդ" պարենի ծրագրի շրջանակներում Մրգանուշի գյուղապետարանը Վարդաշենի և Գետազատի միջնակարգ դպրոցներին նվիրել է ընդհանուր գումարով 268000 դրամի կենցաղային ապրանքներ և գույք

ը/գյուղապետարանի շենքի կապիտալ հիմնանորոգում՝ 3410.0հազ.դրամ

թ/Արևշատի երաժշտական դպրոցին ընթացիկ դրամաշնորհ՝ 60.0 հազ.դրամ

Համայնքը խիստ կարիք ունի ոռոգման ջրի ցանցերի և գյուղամիջյան ճանապարհների վերանորոգման: Այդ նպատակով ձեռնարկվում են միջոցառումներ:

Համայնքի ղեկավար Մ.Սարգսյան